

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ  
YEREVAN STATE UNIVERSITY

---

СТУДЕНЧЕСКОЕ НАУЧНОЕ ОБЩЕСТВО  
STUDENT SCIENTIFIC SOCIETY

ISSN 1829-4367

# СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ СНО ЕГУ

*МАТЕРИАЛЫ ЮБИЛЕЙНОЙ НАУЧНОЙ СЕССИИ,  
ПОСВЯЩЕННОЙ 95-ЛЕТИЮ ОСНОВАНИЯ ЕГУ*

## COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES OF YSU SSS

*MATERIALS OF THE SCIENTIFIC SESSION  
DEDICATED TO THE 95<sup>TH</sup> ANNIVERSARY OF YSU*

**1.5 (8)**

*Общественные науки - Social sciences*

*(Юриспруденция и политология) - (Jurisprudence and Political science)*

ЕРЕВАН - YEREVAN  
ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ - YSU PRESS

2015

# ԵՊՀ ՈՒԳԸ ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

*ԵՊՀ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 95-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐԿԱԾ  
ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՆՅՈՒԹԵՐ*

## 1.5 (8)

*Հասարակական գիտություններ  
(Իրավագիտություն և քաղաքագիտություն)*

ԵՐԵՎԱՆ  
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԿՉՈՒԹՅՈՒՆ

2015

**Հրատարակվում է**  
**ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ**  
**Издается по решению Ученого совета ЕГУ**  
**Published by the resolution of the Academic Council of YSU**

***Խմբագրական խորհուրդ՝***

ի. գ. դ., պրոֆ. Ա. Գաբուզյան  
ի. գ. դ., պրոֆ. Ս. Դիլբանդյան  
ի. գ. դ., պրոֆ. Ա. Վաղարշյան  
բ. գ. դ., պրոֆ. Գ. Զեռյան  
ի. գ. թ., դոց. Լ. Մելիքջանյան  
ի. գ. թ., դոց. Գ. Բեքմեզյան  
ս. գ. թ., դոց. Մ. Վարդազարյան

***Редакционная коллегия:***

д. ю. н., проф. А. Габузян  
д. ю. н., проф. С. Дилбандян  
д. ю. н., проф. А. Вагаршян  
д. п. н., проф. Г. Керян  
к. ю. н., доц. Л. Меликджанян  
к. ю. н., доц. Г. Бекмезян  
к. и. н., доц. М. Вардазарян

***Editorial Board***

DSc, prof. A. Gabuzyan  
DSc, prof. S. Dilbandyan  
DSc, prof. A. Vagharshyan  
DSc, prof. G. Keryan  
PhD, associate prof. L. Melikjanyan  
PhD, associate prof. G. Bekmezyan  
PhD, associate prof. M. Vardazaryan

Հրատ. պատասխանատու խմբագիր՝ ***Մ. Մալխասյան***

Հրատարակիչ՝ ԵՊՀ հրատարակչություն  
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ալ. Մանուկյան 1, (+374 10) 55-55-70, publishing@ysu.am  
Հրատարակության նախապատրաստող ստորաբաժանում՝ ԵՊՀ ուսանողական  
գիտական ընկերություն  
Հասցե՝ ք. Երևան, Ա. Մանուկյան 1, (+37460) 71-01-94, ssspub@ysu.am, sss@ysu.am  
ԵՊՀ ՌԻԳԸ հրատարակումների կայք՝ ssspub.yasu.am

## **ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ**

Երիտասարդները պետք է հնարավորություն ունենան իրացնելու ազատ արտահայտվելու իրենց իրավունքը՝ ըստ իրենց աճող հնարավորությունների, ինչպես նաև կառուցելու ինքնազնահատական, հավաքելու գիտելիքներ և հմտություններ՝ ներառյալ այնպիսիք, որոնք անհրաժեշտ են կոնֆլիկտների լուծման, որոշումների կայացման և հաղորդակցման համար: Այս գիտելիքներն ու հմտություններն անհրաժեշտ են կյանքի խնդիրների դիմակայման համար:

Մենք պետք է ձգտենք մշակել և իրականացնել ծրագրեր, որոնք կաջակցեն երիտասարդների իմաստալից մասնակցությանը որոշումների կայացման գործընթացում տանը, դպրոցում, տեղական և պետական մակարդակներում:

ՀՀ-ում համակարգված երիտասարդական քաղաքականությունը սկսեց գիտակցվել ՀՀ անկախության հռչակումից հետո: Սակայն պետական կառավարման ոլորտում գործնական քայլ արվեց 1995 թ., երբ ՀՀ մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կազմում հիմնվեց երիտասարդության հարցերի վարչություն: 1998 թ. ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարությունում կատարված կառուցվածքային փոփոխությունների հետևանքով ստեղծվեց երիտասարդության հարցերը համակարգող փոփոխված սարքի պաշտոն: 2002 թ. երիտասարդության հարցերի վարչությունը վերածնվեց երիտասարդական քաղաքականության վարչության<sup>1</sup>: Այս փոփոխությունն արտահայտում է ավելի քան 15 տարիների զարգացումն ու Էվոլյուցիան՝ «երիտասարդական հարցերից» դեպի «երիտասարդական քաղաքականություն»: ՀՀ պետական երիտասարդական քաղաքականության մշակման և իրականացման լիազոր մարմինը 2007 թ. հունիսից ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունն է, որի աշխատակազմ են տեղափոխվել երիտասարդական քաղաքականության վարչությունը և ոլորտը համակարգող նախարարի տեղակալի պաշտոնը<sup>2</sup>: ՀՀ երիտասարդական պետական քաղաքականությունը գերազանցապես իրականացվում է պետական կառույցների և հասարակական կազմակերպությունների ու հիմնադրամների միջոցով:

### **1. Պետական հատված.**

ա) Կառավարություն և նրա ստեղծած կազմակերպություններ ու մարմիններ՝

- ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն,
- ՀՀ վարչապետին առընթեր երիտասարդության հարցերով խորհուրդ,
- ՀՀ մարզպետարանների, քաղաքապետարանների՝ երիտասարդության հարցերով զբաղվող ստորաբաժանումներ,
- Կառավարության հովանու ներքո կազմակերպություններ և հիմնադրամներ:

բ) ՀՀ Ազգային ժողովի կրթության, գիտության, մշակույթի, երիտասարդության և սպորտի հարցերի հանձնաժողով:

<sup>1</sup> «Հայաստանի երիտասարդական ազգային զեկույց», Երևան, 2007:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 21:

## 2. Հասարակական-քաղաքական հատված.

- Երիտասարդական հասարակական կազմակերպություններ,
- Ուսանողական խորհուրդներ,
- Ուսանողական գիտական ընկերություններ,
- Կուսակցությունների երիտասարդական թևեր,
- Երիտասարդական միություններ, նախաձեռնություններ:

## 3. Միջազգային կազմակերպությունների ստորաբաժանումներ:

Որպես երիտասարդական քաղաքականության դերակատարներ՝ կարելի է նշել նաև մասնավոր հատվածը, քաղաքացիական հասարակության տարբեր ինստիտուտները, դոնոր հանրությունը և այլն:

ՀՀ կառավարության 1998 թ. դեկտեմբերի 14-ի թիվ 798 որոշմամբ հաստատվեց երիտասարդական պետական քաղաքականության ոլորտներին առնչվող առաջին փաստաթուղթը՝ «Երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգը»<sup>1</sup>:

ՀՀ երիտասարդական քաղաքականության վրա ազդող միջազգային դերակատարներից անհրաժեշտ է առանձնացնել միջազգային դոնոր և երիտասարդական կազմակերպությունները: Եվրոպական հարթության մեջ այս առումով առանցքային է Եվրոպայի խորհրդի երիտասարդության և սպորտի տնօրինությունը, որը մշակում է ուղեցույցներ, ծրագրեր և իրավական ու գործնական գործիքներ՝ ուղղված համաձայնեցված և արդյունավետ երիտասարդական քաղաքականության զարգացմանը՝ համաեվրոպական, պետական և տեղական մակարդակներում: Տնօրինությունը կրթական և ֆինանսական աջակցություն է տրամադրում երիտասարդական միջազգային նախաձեռնություններին, որոնք ուղղված են երիտասարդ քաղաքացիների քաջակերմանը, երիտասարդների շարժունակության ապահովմանը, մարդու իրավունքների, ժողովրդավարության և բազմակարծության արժեքների տարածմանը<sup>2</sup>: Եվրոպական երիտասարդական դերակատարներից կարելի է հիշատակել Եվրոպայի խորհրդի երիտասարդության և սպորտի տնօրինության հովանու ներքո գործող Եվրոպական երիտասարդական կենտրոնները, Եվրոպական երիտասարդական հիմնադրամը և այլն:

ՀՀ-ում երիտասարդական քաղաքականության վրա էական ազդեցություն ունեն ՄԱԿ կազմում գործող գործակալությունները՝ ՄԱԿ մանկական հիմնադրամը, ՄԱԿ բնակչության հիմնադրամը, ՄԱԿ զարգացման ծրագիրը: Ընդունելով երեխաներին նվիրված նիստը եզրափակող «Վշխարհը երեխաների համար»<sup>3</sup> բանաձևը՝ պետությունները հանձնառություն են վերցրել երիտասարդների մասնակցությունը ակտիվացնելու ուղղությամբ: Միջազգային այլ կազմակերպություններ ևս իրենց առաջնահերթություններում ներառում են երիտասարդության բաղադրիչը, ինչպես օրինակ՝ ժողովրդավարության ազգային ինստիտուտը (NDI), Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպությունը (OSCE), Գերմանիայի տեխնիկական համագործակցության ընկերությունը (GTZ) և այլն<sup>4</sup>:

Երիտասարդական պետական քաղաքականության ռազմավարության նպատակն է՝ բարելավել երիտասարդների կենսապայմանները, բարձրացնել հասարակական-քաղաքական կյանքին նրանց մասնակցության աստիճանը: Ռազմավարության նպատակներից է նաև աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի համատեքստում կառավարության՝ երիտասարդներին առնչվող գործողությունների լայն

<sup>1</sup> «Հայաստանի երիտասարդական ազգային զեկույց», 2007, էջ 20-21:

<sup>2</sup> Տե՛ս [www.youthforum.org](http://www.youthforum.org):

<sup>3</sup> “Resolution. A world fit for children”, ընդունվել է ՄԱԿ գլխավոր վեհաժողովի կողմից 2002 թ. հոկտեմբերի 11-ին, տե՛ս [www.unicef.org](http://www.unicef.org):

<sup>4</sup> Միջազգային կազմակերպությունների կայքերը՝ համապատասխան հավելվածում:

շրջանակ ձևավորելը, ըստ որի՝ կառավարությունը նրանց բնորոշ գերակայություններ կսահմանի առաջիկա տարիների համար, մասնավորապես՝

- ա) ծառայությունների և տեղեկատվության մատչելիության բարելավում,
- բ) հասարակական-քաղաքական կյանքին մասնակցություն,
- գ) երիտասարդների զբաղվածության ապահովում,
- դ) երիտասարդների մարդկային և ինստիտուցիոնալ հնարավորությունների ընդլայնում ու նրանց մասին իրազեկության աստիճանի բարձրացում<sup>1</sup>:

ՀՀ երիտասարդական պետական քաղաքականությունը, ինչը պետության կարևորագույն գործառնություններից է, ռազմավարական կարևոր նշանակություն ունի: Այն կոչված է ստեղծելու ազգային և համամարդկային արժեքներին հաղորդակից, հայրենիքի և ժողովրդի նկատմամբ պատասխանատվության խոր գիտակցում ունեցող երիտասարդ սերնդի համակողմանի զարգացման, ինքնահաստատման, ինքնադրսևորման իրավական և տնտեսական պայմաններ ու երաշխիքներ:

Հետազոտությունները ցույց են տվել, որ հնարավոր է նկարագրել մասնակցության զարգացման գործընթացը՝ համեմատելով երիտասարդական խմբերը դպրոցական տարբեր խմբերի հետ: Այդ իսկ պատճառով մենք կարող ենք սահմանել խմբերի հերթականությունը՝ դասակարգելով 13-ից 18 տարեկաններին<sup>2</sup>:

Պետական երիտասարդական քաղաքականության իրականացման ուղղությամբ աշխատանքներ են տարվում երիտասարդական քաղաքականության նորմատիվային փաստաթղթի մշակման, մարզային կենտրոնների գործունեության ակտիվացման, նրանց կառավարման խորհուրդների ձևավորման, մարզերում երիտասարդական հասարակական կազմակերպությունների տվյալների բազայի պահպանման և թարմացման ուղղությամբ: ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունում մշակվում և իրականացվում են ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության 2008-2012 թթ. ռազմավարության կատարումն ապահովող 2009-2012 թթ. գործողությունների ծրագրի գերակայություններից բխող ծրագրեր<sup>3</sup>: ՀՀ պետական երիտասարդական քաղաքականության 2008-2012 թթ. գերակայություններն են՝

- Երիտասարդների ձգտումներին, ընդունակություններին ու կարողություններին համապատասխան որակյալ կրթություն ստանալու հնարավորության ապահովում,
- Չբաղվածության և աշխատատեղերի ստեղծում, կրթություն ստանալու հնարավորության ապահովում,
- Երիտասարդների սոցիալ-տնտեսական վիճակի բարելավում,
- Երիտասարդների շրջանում առողջ ապրելակերպի խթանում, հոգևոր-մշակութային, հայրենասիրական դաստիարակություն<sup>4</sup>:

Երիտասարդներն աշխատանքի տեղավորման հարցում ունեն լուրջ խնդիրներ: Նրանք, չունենալով աշխատանքային փորձ և հմտություններ, հաճախ մերժվում են գործատուի կողմից: Ուսումնասիրության արդյունքում առաջին անգամ աշխատանք փնտրող անձինք կազմել են 15442 մարդ, որոնցից 2128-ը տվյալ տարվա շրջանավարտներ են: Ընդ որում, 2011 թ. «Մասնագիտություն ունեցող, սակայն աշխատանք փնտրող չզբաղված հաշմանդամների աշխատանքային պրակտիկայի կազմակերպումը գործատուի մոտ» ծրագրի ներդրման արդյունքում աճել է երիտասարդ գործազուրկների թիվը<sup>5</sup>:

<sup>1</sup> «Հայաստանի երիտասարդական ազգային գեկույց», 2007, էջ 22:


<sup>2</sup> Hyman H., Political socialization, From the collection of D. Rustow, Glencoe, Illinois, 1959, p. 52-53.

<sup>3</sup> Տե՛ս [www.msy.am](http://www.msy.am):

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>5</sup> Տե՛ս [www.employment.am](http://www.employment.am):

Հետազոտության տվյալներով ՀՀ 18-ից 30 տարեկան երիտասարդների շրջանում զբաղվածները կազմում են 48,7 %, գործազուրկները՝ 18,7 %, իսկ տնտեսապես ոչ ակտիվ հատվածը՝ 32,6 %: Հարկ է տարբերակել գործազուրկների քանակ և գործազրկության մակարդակ հասկացությունները: Առաջինը գործազուրկների տոկոսն է բնակչության դիտարկվող խմբում, իսկ երկրորդը՝ բնակչության տվյալ խմբում գործազուրկների քանակի հարաբերակցությունը նույն խմբում հաշվառված գործազուրկների և զբաղվածների քանակին: Ակնհայտ է, որ երկրորդը միշտ ավելի մեծ է առաջինից կամ հավասար է: Երիտասարդության շրջանում գործազուրկների քանակն ավելի մեծ է, քան ՀՀ տարիքային մյուս խմբերում<sup>1</sup>: Գործազրկության մակարդակը երիտասարդության շրջանում կազմել է 27,8 %, և դա այն դեպքում, երբ հանրապետության մասշտաբով 2011 թ. սեպտեմբերին այն 20,7 % էր<sup>2</sup>:



- Տնտեսապես ոչ ակտիվ
- Գործազուրկ
- Զբաղված

**Գծապատկեր 1.** Զբաղվածության կարգավիճակների բաշխումն ըստ տարիքի<sup>3</sup>

<sup>1</sup> Ըստ 2011 թ. սեպտեմբերին «Այ Փի Ես Սի» սոցիոլոգիական և բաղաբանական խորհրդատվությունների ինստիտուտի կողմից իրականացված հետազոտության տվյալների՝ ՀՀ-ում 18 և ավելի տարիքի բնակչության 15.1 % գործազուրկ է:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>3</sup> Տե՛ս «Հայաստանի երիտասարդության ազգային զեկույց», Երևան, 2011, էջ 41:

Պետական երիտասարդական քաղաքականությունը պետական գործունեություն է, որը նպատակ ունի լուծել երիտասարդության առանձնահատուկ խնդիրները՝ կախված այն բանից, թե տվյալ հասարակության մեջ ինչն է համարվում երիտասարդության հիմնախնդիր, ինչպես են որոշում սոցիալական գործընթացների պետական կառավարման սահմաններն ու խնդիրները, որքանով է, ըստ տարիքային հատկանիշի, հասարակության տարբերակումն արտացոլում մշակութային ավանդույթը և համապատասխանում տվյալ հասարակության մեջ ձևավորված արժեքներին ու նորմերին: Պետական երիտասարդական քաղաքականությունն էականորեն տարբերվում է և՛ ըստ հայեցակարգի, և՛ գործնականում իրականացման մեթոդների կիրառմամբ: Սկզբնական շրջանում եվրոպական երկրներում երիտասարդության հանդեպ հոգատարությունը դիտվում էր որպես քրիստոնեական օժանդակություն աղքատներին: Այն աստիճանաբար սկսեց ընկալվել որպես հասարակության մեջ հակամարտությունների վերացման պետական քաղաքականության մաս: Չուգահեռաբար ստեղծվեց երիտասարդությանը վերահսկելու համակարգ: Հետագայում երիտասարդ սերնդի նկատմամբ հոգատարության և վերահսկման գաղափարներն ամբողջացան երիտասարդության օգնության հայեցակարգում, իսկ մասնավոր նախաձեռնությունն այդ բնագավառում սկսեց կարգավորվել օրենքով<sup>1</sup>: Իրավական կանոնակարգումը գլխավորապես ուղղվեց պատանիների արտադրական վնասվածքների մասշտաբների կրճատմանը և անչափահասների շրջանում հանցագործության աճի կանխմանը: XX դ սկզբին մի շարք երկրներում ձևավորվեցին դատարանների հատուկ կազմեր անչափահասների համար (1908 թ.՝ Գերմանիայում, 1910 թ.՝ Ռուսաստանում և այլն), օրենսդրության մեջ հայտնվեցին դրույթներ, որոնք ուղղված էին երիտասարդ քաղաքացիների իրավունքների պաշտպանությանը, բայց օրենքը չէր խրախուսում երիտասարդության սոցիալական գործունեությունը՝ այն համարելով դաստիարակության համար ոչ պիտանի ու վնասակար:

Պետական երիտասարդական քաղաքականության հայեցակարգ է մշակվել ԽՍՀՄ-ում և Խորհրդային Հայաստանում սկսած 1920-ական թթ.: Դրա ձևավորման համար վճռական նշանակություն ունեցավ Վ. Լենինի ճառը Ռուսաստանի ԿԵՄ 3-րդ համագումարում: Կոմերիտմիությունը երիտասարդությանը ներկայացնելու հատուկ իրավասություն ձեռք բերեց և դարձավ երիտասարդության հիմնախնդիրների լուծման պետական համակարգի կարևորագույն տարրը: Հասարակության մեջ Կոմկուսի և Կոմերիտմիության դիրքերի ամրապնդման հետևանքով պետական մեխանիզմները նեղացան, և պետական երիտասարդական քաղաքացիությունը դարձավ երիտասարդության կոմունիստական դաստիարակության գաղափարական օժանդակ գործիք:

Երիտասարդության առանձին իրավունքների օրենսդրական ամրագրումը 1990-ական թթ. համաշխարհային պրակտիկայի համար դարձավ ընդհանուր երևույթ (երիտասարդության սոցիալական պաշտպանության մասին օրենքներ ընդունվեցին Ավստրիայում, Աֆղանստանում, Հունաստանում, Հնդկաստանում, Իսպանիայում, Իտալիայում, Չինաստանում, Հոլանդիայում, Շվեդիայում և այլուր): Շատ երկրներում ստեղծվել են երիտասարդության գործերի պետական մարմիններ, ընդունվել ազգային ծրագրեր: Պետական երիտասարդական քաղաքականությունը դարձավ ՄԱԿ մի շարք ակտերի և միջոցառումների առարկա (Երիտասարդության միջազգային տարի՝ 1985 թ., Երիտասարդության միջազգային տարվա տասնամյակ՝ 1995 թ., և այլն)<sup>2</sup>:

Ներկայումս պետական երիտասարդական քաղաքականությունն առավել որոշակիորեն տարբերվում է երիտասարդության իրավունքների ապահովման մեջ պետու-

<sup>1</sup> Տե՛ս [www.mss.am](http://www.mss.am):

<sup>2</sup> Տե՛ս [www.un.org](http://www.un.org):



թյան դերի հարցերով: ԱՄՆ հայեցակարգը հիմնվում է երիտասարդության սոցիալականացմանը պետական կառույցների նվազագույն մասնակցության վրա: Մեկ այլ մոտեցում է առկա Գերմանիայի երիտասարդության միջև EMNID հարցումների արդյունքում ցույց տալով քաղաքական հետաքրքրության աստիճանական աճի տվյալները. 15-18 տարեկանների 27 %-ն արտահայտում են հետաքրքրություն քաղաքականության հանդեպ, 18-21 տարեկանների՝ 39 %-ը, 21-25 տարեկանների՝ 46 %-ը<sup>1</sup>:

Պետական երիտասարդական քաղաքականության այն մոդելը, որը բնորոշ է Շվեդիային, Ֆինլանդիային և Մի շարք այլ երկրների, հենվում է պետության հատուկ դերի, երիտասարդների և երիտասարդական կազմակերպությունների աջակցության միջոցառումները օրենքով կարգավորելու վրա:

ԽՍՀՄ փլուզումից հետո ստեղծված երիտասարդական կազմակերպությունները երիտասարդության փոքր մասն էին ընդգրկում և միմյանց գոյության մասին տեղեկություն անգամ չունեին: Երիտասարդական քաղաքականության իրականացման մի շարք գործառնություններ կազմակերպություններն իրենք էին տարերայնորեն հանձն առել՝ առանց պետական, համակարգված, նպատակաուղղված աջակցության: ՀՀ երիտասարդական քաղաքականության աշխուժացման գործում մեծ դեր են խաղում երիտասարդական կազմակերպությունները՝ հանդիսանալով երիտասարդական պետական քաղաքականության ամենակազմակերպված սուբյեկտը: Նրանք մշտապես պետք է լինեն երիտասարդական պետական քաղաքականության կրողը և իրականացման հիմնական միջոցը: Երիտասարդական պետական քաղաքականության հիմնական նպատակներից պետք է լինի ոչ միայն Երևանում, այլև ՀՀ մարզերում երիտասարդական մասնակցության բարձրացումը: ՀՀ քաղաքացիները, հատկապես՝ երիտասարդները, պետք է ունենան հիմնական հմտություններ ձեռք բերելու և դրանք զարգացնելու հնարավորություններ, կարողանան հետազոտել և լուծել խնդիրներ, օգտագործել տեղեկատվական տեխնոլոգիաները, տիրապետել մայրենի լեզվին, լինել ֆիզիկապես կոփված, եռանդուն, ազատ և պատասխանատու քաղաքացիներ, որոնց համար գերակա են ազգային ավանդույթների պահպանումը և զարգացումը:

Պետք է խթանել նաև մարզային երիտասարդության մասնակցությունը քաղաքականությանը: Մարզերում երիտասարդներն ավելի պասիվ են և իրենց չեն տեսնում երկրի կառավարման գործընթացում: Մարզերում երիտասարդական քաղաքականությունն իրականացվում է հետևյալ ուղղություններով.

1. Երիտասարդության զբաղվածության և աշխատանքի ապահովման ոլորտում երաշխիքների ապահովում, պետական կադրային քաղաքականության իրականացումը
2. Երիտասարդության գործունեությունն ապահովող տեղական մակարդակում իրավական համակարգի ստեղծում,
3. Երիտասարդ ընտանիքներին պետական օժանդակություն,
4. Երիտասարդական կազմակերպությունների գործունեության աջակցություն,
5. Այլ երկրների, հատկապես՝ սփյուռքահայության երիտասարդների հետ համագործակցության ապահովում,
6. Երիտասարդների հոգևոր և ֆիզիկական զարգացման, նրանց քաղաքական և հայրենասիրական դաստիարակության համար անհրաժեշտ պայմանների ստեղծում:

1990-ական թթ. ռուսական հասարակության տրանսֆորմացիայի ընթացքում երիտասարդական դաստիարակության հիմնախնդիրը հեռացավ կրթության ոլորտից, ՉԼՄ-ները սկսեցին քիչ ուշադրություն դարձնել հայրենասիրական դաստիարա-

<sup>1</sup> Hyman H., p. 54.

կուռյանը՝ երիտասարդներին թողնելով բարձիթողի վիճակում: Շուտով պարզ դարձավ, որ այդ քաղաքականությունը չի կարող երկար շարունակվել, և 2000 թ. Կառավարությունն սկսեց քայլեր ձեռնարկել այդ ուղղությամբ: 2001 թ. փետրվարի 16-ին ՌԴ կառավարությունը որոշում ընդունեց 2001-2005 թթ. երիտասարդության հայրենասիրական դաստիարակության վերաբերյալ: 2005 թ. հայտնվեց 2006-2010 թթ. երիտասարդական քաղաքականությանը վերաբերող փաստաթուղթ<sup>1</sup>: Հետագոտությունները ցույց են տվել, որ 21-րդ դարի ռուսական հասարակական կյանքի արժեքներն են հանդիսանում ընտանիքը, ընկերները և առողջությունը, որոնց հետևում են հետաքրքիր աշխատանքը, գումարը, արդարությունը (որի ընկալումը երիտասարդության շրջանում անշեղորեն աճում է)<sup>2</sup>:

Երիտասարդական քաղաքականության բնագավառում անհրաժեշտ է պետության, տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակության, քաղաքացիների և երիտասարդների օրինական շահերի, իրավունքների և պարտականությունների հավասարակշռված ապահովումը:

ՀՀ երիտասարդական քաղաքականության իրականացման գործում, կառուցվածքային փոփոխություններից բացի, ստեղծվել են պետական նոր կառույցներ: ՀՀ կառավարության հունիսի 11-ի թիվ 520 որոշմամբ ստեղծվել է «Համահայկական երիտասարդական միջազգային կենտրոն» հիմնադրամը, որի նպատակն է հանրապետության, Սփյուռքի և արտասահմանի երիտասարդության համագործակցության զարգացումը, համատեղ ծրագրերի մշակումը և իրականացումը: ՀՀ մարզպետարանների աշխատակազմում երիտասարդական հարցերի մասնագետի հաստիքը գործնականում ստեղծվեց 2004 թ.՝ ՀՀ վարչապետի հանձնարարությամբ<sup>3</sup>:

Այսպիսով, երիտասարդական քաղաքականության նպատակը երիտասարդ մարդու սոցիալական կայացման, նրա ստեղծագործ ներուժն ի շահ հասարակության օգտագործելու, սոցիալական, իրավական, քաղաքական, հոգևոր և մշակութային պայմաններ և երաշխիքներ ստեղծելն է:

ՀՀ-ում ժողովրդավարացման, քաղաքացիական հասարակության կառուցման գործընթացների հաջողության ամենակարևոր գրավականներից մեկը երիտասարդության մասնակցությունն է: Վերջին տարիներին ստեղծվել են կառավարման համակարգի գործունե կառույցներ և մեխանիզմներ՝ ՀՀ վարչապետին կից երիտասարդական հարցերով խորհուրդ, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից ստեղծված է դրամաշնորհային ծրագրերի փորձագիտական հանձնաժողով: ՀՀ մարզերում գործում են մարզային երիտասարդական կենտրոններ՝ դրանց կառավարման համակարգում քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների ներգրավմամբ: ՉԼՄ-ներով և համացանցով ապահովվում է բնագավառի վերաբերյալ ամբողջական տեղեկատվության ստացումը:

Երիտասարդության զարգացման համատեքստում Կառավարությունը ձևավորել է բարեփոխումների լայն շրջանակ, ըստ որի՝ պետք է բարելավել երիտասարդների կենսապայմանները, բարձրացնել հասարակական, քաղաքական կյանքին նրանց մասնակցության աստիճանը, ապահովել նրանց զբաղվածությունը, ծառայությունների և տեղեկատվության մատչելիությունը:

<sup>1</sup> Государственная программа “Патриотическое воспитание граждан Российской Федерации на 2006-2010 гг.”, Москва, 2005, с. 37-38.

<sup>2</sup> Данные социологических исследований, проведенных сотрудниками НИИКСИ СПбГУ, СПб., 2002, выборка 639 чел.; СПб., 2003, выборка 857 чел.; Ленинградская обл., 2005, выборка 834 чел., СПб., Москва и города провинции, 2006, выборка 705 чел. (Отчет по научно-исследовательским проектам НИИКСИ СПбГУ, 2006).

<sup>3</sup> ՀՀ վարչապետի 1997 թ. դեկտեմբերի 8-ի № 598 որոշմամբ ՀՀ մարզպետարանների աշխատակազմերում նախատեսվում էր ստեղծել երիտասարդության հարցերով մասնագետի հաստիք, տե՛ս «Նայաստանի երիտասարդության ազգային զեկույց», 2007, էջ 22:

Այսպիսով, ՀՀ երիտասարդական պետական քաղաքականությունը ռազմավարական նշանակություն ունի: Այն կոչված է ստեղծելու ազգային և համամարդկային արժեքներին հաղորդակից, հայրենիքի և ժողովրդի նկատմամբ պատասխանատվության խոր գիտակցում ունեցող երիտասարդ սերնդի համակողմանի զարգացման և ինքնադրսևորման իրավական, սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական պայմաններ ու երաշխիքներ:

Առնակ Սարգսյան

### **ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ**

*Բանալի բառեր՝ երիտասարդության քաղաքական ներգրավվածություն, երիտասարդության մասնակցություն, համակարգված երիտասարդական քաղաքականություն, զբաղվածություն, երիտասարդության կյանքի արժեքներ, հայրենասիրական դաստիարակություն, զարգացման քաղաքականություն*

Ակտիվ, կիրթ ու նախաձեռնող երիտասարդները երկրի ամենամեծ արժեքն են: Աշխարհի բոլոր երիտասարդներին պետք է խրախուսել, որպեսզի նրանք իրենց էներգիան, զաղափարներն ու եռանդը գործի դնեն ի նպաստ իրենց համայնքների աճի ու զարգացման: Երիտասարդները նաև կարևոր դերակատարում ունեն քաղաքացիական հասարակության ձևավորման և առավել լայն համատեքստում ժողովրդավարության հիմքերի երաշխավորման հարցում: Ժողովրդավարության լավագույն դրսևորումը բաց երկխոսությունն է: Ակտիվություն հանդես բերելով իրենց համայնքներում՝ երիտասարդներն առանցքային դերակատարում են ունենում քաղաքականության, միջոցառումների ու գործողությունների մշակման հարցում, որ իրականացվում են իրենց դպրոցների, քաղաքացիական առաջնորդների ու պետության կողմից:

Арнак Саргсян

### **ПЕРСПЕКТИВЫ УВЕЛИЧЕНИЯ ВОВЛЕЧЕННОСТИ МОЛОДЕЖИ В ПОЛИТИЧЕСКУЮ ЖИЗНЬ РА**

*Ключевые слова: политическая вовлеченность молодых, политическое участие, систематизированный молодежная политика, занятость, ценности молодежной жизни, патриотическое воспитание, политика развития*

Активная, образованная и предприимчивая молодежь – самая большая ценность страны. Молодежь всего мира надо призывать направить свою энергию и идеи на развитие и рост их общин. Молодежь также играет важную роль в формировании гражданского общества и, в более широком смысле, в гарантии основ демократии. Наилучшее проявление демократии – диалог. Принимая активное участие в жизни общин, молодежь играет ключевую роль в развитии политики и мероприятий, проводимых политическими деятелями и государством в местных школах.

Arnak Sargsyan

### **THE PERSPECTIVE OF PROMOTING YOUTH INVOLVEMENT IN POLITICS IN RA**

*Keywords: Youth political involvement, youth participation, systemized youth policy, employment, youth life values, patriotic upbringing, development policy*

An active, educated, and engaged youth is a nation's greatest asset. Young people around the world should be encouraged to contribute their energy, idealism, and insights to their communities' growth and progress. Youths also play a critical role in developing civil society, and in broader sense, in ensuring the foundations of democracy. Democracy, at its best, is an open dialogue. By actively engaging in their communities, young people play a pivotal role in the articulation and development of the policies, means and structures, and actions implemented by their schools, civic leaders, and governments.